



Բժ. Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ.

# ԱՂԻՔՆԵՐԻ ՃԻՃՈՒՆԵՐԸ



Տափակ ճիճովի գլուխը



ԳՐԱԴԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԴԻԿԱՆԱՐԺԻ, ՄԻՋԱՑԱՐ.

Խ ԳՐԱԴԱՐԱՆ „ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱ“ 22.

Բժ. Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ.

616.962  
Խ-98

1981 թ.

## ԱՂԻՔՆԵՐԻ

# ՃԻՃՈՒՆԵՐԸ

A 1/2538



Թ-121-10-1988

ՏԱՐԱՆ ՊՈԼԻԳՐԱՖԻԿՈՑԻ  
ԱԿԱԿԻ ՇԵՐԵՖԵԼԻ ՓՈՂ. № 3.  
ԳԼԱՎԼԻՏ 288. Տիրագ 6000.

## ԱՂԻՔՆԵՐԻ ՃԻՃՈՒՆԵՐԸ

Վերջին գիտական հետազոտություններն ապացուցանում են, վոր համարյա բոլոր մարդիկ վարակված են ճիճուներով:

Մոսկվայի բժշկական քննությունները ցույց են տվել, վոր այնտեղ բոլոր յերեխաները տառապում են այս կամ այն տեսակի ճիճվով։ Մեր կատարած քննությունները ևս տալիս են նույն հետևանքները։

Ի՞նչ ե ճիճուն. ճիճուն ձրիակեր (պարագիտ) ե, ինչպես և բաղլինջը կամ վոջիլը, միայն այն տարբերությամբ, վոր ճիճուն ապրում ե մեր մարմնի մեջ, իսկ բաղլինջը մեր մարմնից դուրս. բացի այդ, ճիճուն մշտական պարագիտ ե, քանի վոր նա ընկնելով մեր աղիքների մեջ համարյա թե շարունակ մնում ե այնտեղ, այն ինչ բաղլինջը միայն այն ժամանակ ե հարձակվում մեզ վրա, յերբ ուտել ե ուզում, իսկ ուտելուց հետո հեռանում ե։

Ճիճուները բազմանում են շատ ուժեղ կերպով. կոր ճիճուն (ասկարիդը) մի տարում տալիս ե մոտ 64 միլիոն ձվիկ, իսկ տափակ ճիճուն (սոլիտերը) 80 միլիոն ձու։

Ճիճուներն ընկնելով մեր մարմնի մեջ՝ նախ առատությամբ ծծում են մեր սնունդն ու արյունը և յերկրորդ՝ թունավորում են մեզ իրենցից արտադրած թույնով. ճիճուներից մի քանիսն

այնքան խիստ թունավոր են, վոր զնասում են մինչև անդամ յեթե ընդամենը մի քանի հատ են: Կարելի յե հաստատապես ասել, վոր յերեխաների սակավարյունության ամենազվածավոր պատճառներից մեկը ճիճուներն են: Բացի պակասարյունությունից, պետք և ճիճուներին վերագրել յերեխայոց մի շարք նյարդային հիվանդություններ: Ճիճուները պատճառ են լինում և այլ հիվանդությունների՝ վորսվայնային տիֆի, արյունաթուծության, բարակացակի, կույր աղիքի բորբոքման և այլն:

**Ճիճուների ՏեսԱկների:** Ազգաբնակչությունը կարծում և թե միայն մի քանի տեսակ ճիճուներ կան. այն ինչ նորագույն զիտական հետազոտություններն հաստատում են, վոր հարյուրից ավելի զանազան տեսակի ճիճուներ կան, սկսած ասեղի ծայրի մեծությունից մինչև մի քանի մետր յերկայնության:

Ճիճուները բաժանվում են յերեք խմբի՝ տափակ, կլոր և ծողով:

**ՏԱՓԱԿ Ճիճուներ:** Տափակ ճիճուներից մի քանիսը կոչվում են նույնպես ժապավենաձե, նեղ և յերկայն լինելու պատճառով. այս ճիճուններն ունեն փոքր զլուխ, վորին հետեւում և կարծ պարանոց և յերկար մարմին: Մարմինը բաղկացած և առանձին մասնիկներից, վորոնք պարանոցի մոտ շատ փոքր են, իսկ վորքան հեռանում են գեղի պոչի մասն՝ ավելի մեծանում են: Յերիտասարդ մասնիկները զոյանում են պարանոցի մոտից. պոչի մոտի մասնիկները սեռականապես հասունացած մասեր են, վորոնք և արտադրում

Են ձվիկներ։ Մաշկն այնպիսի կազմություն ունի վոր կարողանում ե ծծել իրեն հարկավոր սնունդը։

Գլխի վրա տափակ ճիճուներն ունեն ծծիչներ, վորով նրանք կողչում են աղիքների պատերին։

Յուրաքանչյուր հասունացած մասնիկ միաժամանակ ունի արական և իգական սեռական գործարան. (հերմոֆրոպիտ են). իգական սեռական գործարանից բեղմնավորված ձվիկը միայն այն դեպքում կարող ե դուրս ընկնել, յերբ մասնիկը բաժանվի մարմնից։

Բեղմնավորված ձվիկը կատարելապես զարգանալու համար պետք ե ընկնի մեկ ուրիշ կենդանու (միջնորդ կենդանի) մարմնի մեջ։ Բեղմնավորված ձվիկի կեղեր, ընկնելով միջնորդ կենդանու ստամոքսի մեջ, հալվում ե և ձվիկը վերափոխվում ե փամփշտաճե ճիճվի. այստեղից ել այդ փամփշտաճե ճիճվի այստեղից ել այդ փամփշտաճե ճիճվի մեջ։ Մարդիկ այդպիսի կենդանու միսը կիսայեփ ուտելով, իրենք ել վարակվում են, այսինքն ճիճուն ընկնում ե նրանց աղիքների մեջ, վորտեղ և միալով զարգանում ե։

Տափակ ճիճուներից հիշեմ հետեւալները՝



Մասկական յերիզ

1) Լայն ժապավենաձեվ նինու, վորի միջնորդ կենդանին ձկներն են, մանավանդ սիդա, ոկուն և շչուկա ձկները:

2) Անգեն տափակ նինու, վորի միջնորդ կենդանիները յեղջուրավոր անասուններն են:

3) Զինված տափակ նինու. սրանք ել լինում են խողի մսի մեջ:

4) Եխինոկոկ. սրանք ապրում են շան աղիքների մեջ, բաղկացած են 3—4 մասնիկներից. սրանց ձվիկները շան աղիքներից աղտօտությունների հետ գուրս են թափվում, վորոնք կարող են կոչել շան մազերին. յերբ վոր մարդիկ շոյում են շանը (մանավանդ յերեխաները) և հետո անզգուշությամբ ձեռքը բերանը տանում, վարակվում են եխինոկոկի ձվաներով. ձվաները բերանից կերակրի հետ ընկնում են աղիքների մեջ, իսկ այդաեղից կարող են ընկնել լարդի, սրտի, յերիկամունքի, թոքերի և մինչև իսկ ուղեղի մեջ: Եխինոկոկը ինքը, փոքր ե, բայց նրա փամփուշտաձև ճիճուն կարող ե հասնել շատ մեծ չափերի: Այս ճիճուն շատ փտանգավոր ե մարդու նկատմամբ և կարող ե մահվան պատճառ լինել: Եխինոկոկն ընկնելով աչքի մեջ կարող է կուրացնել մարդու: Իբրև նախազգուշական միջոց եխինոկոկով չվարակվելու համար, չպետք է թույլ տալ յերեխաներին խաղալ շների հետ և մանավանդ չթողնել շներին նստել անկողնի վրա:

ԿԼՈՐ ՃԻՃՈՒԽՆԵՐԻ: Այս ճիճուները տափակներից տարբերվում են նրանով, վոր սրանց մարդինը կլոր ե և ամբողջ: Կլոր ճիճուների մարմինն առջեից բացվում ե բերանով, վորին հետևում

ե մարտողության գործարանը. կամ սրանց թե  
արուները և թե յեգերը:


Կլոր ճիճուներով մարդ հիվանդանում ե ուղ-  
ղակի կերպով, առանց միջնորդ կենդանիների:

Կլոր ճիճուներից ամենից վասակարներն են՝  
մանկական յերիզը, վիշապակ կամ ասկարիդը,  
տրիխինը և տրիխոցեֆալուսը (власօգլավ):

Մանկական յերիզ: **Փոքր ճիճու յե, կեսից**  
մինչև մեկ սանտիմետր մեծության, ապրում ե  
մարդու հաստ աղիքներում, վորտեղից ել եգերը  
դուրս են սողում և իրենց ձվաները դնում վեր-  
ջաղիքի դրակի ծալվածքներում \*): **Մի յերիզը**  
կարող ե դնել մինչև 12,000 ձվիկ:

Յերիզներն աղիքներից դուրս գալով, առաջ  
են բերում խիստ քոր անցքի (սրբան) շուրջը.  
Քորը սաստկանում ե մանավանդ անկողնում  
պառկելուց, յերբ յերիզները դուրս են գալիս:  
Աղիքից դուրս գալով՝ յերիզները մտնում են  
փոքրիկ աղջիկների սեռական որգանը, առաջ են  
բերում խիստ քոր և դրանով ել պատճառ են  
լինում վատ սովորության (ոնանականության):  
Յերեխաները քորելով հետեւ, նրանց յեղունգ-  
ների տակ են ընկնում յերիզի ձվիկներն, իսկ  
այնտեղից ել հեշտությամբ կարող են ընկնել  
բերանը և այդպիսով կրկին և կրկին վարակել:

\*.) Ահա թե ինչու քննության համար ուղարկված  
արտաթորության (կալ) մեջ շատ անգամ ձվիկներ չեն  
գտնում, չնայած յերիզի ներկայության: Քննության  
համար պետք ե թույլ կերպով քերել յերեխայի հետե-  
ղի անցքի շուրջը և այդպիսին ուղարկել քննության:



Տրիխոցեֆալուս

Ձվիկների տարածմանը նպաստում են նույնապես ճանձները. Վերջիններս նստելով աղտոտությունների վրա՝ յերիզի ձվիկները կարող են իրենց թաթիկներով տանել և վարակել զանազան մթերքներ. Նույնպես սպիտակեղենի միջոցով կարելի յե վարակվել:

Այս ընտանիքներում, վորտեղ յերեխաներ շահուկան, յեթե մեկը դրանցից հիվանդ լինի և քնիչնեռնեղներին միևնույն անկողնում, նրանց



Ասկարիդ (կլոր) ճիճուն և իր ձուն

Ել կը վարակի: Ահա թե ինչու յերեխաներին միասին մի անկողնում չպետք է պառկեցնել: Լվացքի ժամանակ սպիտակեղենը պետք է յեփ տալ. յերեխաների մատների յեղունգները պետք է կարծ կտրել և մաքուր պահել, մթերքները պետք է ծածկած պահել, վոր ճանճերը չնստեն, իսկ մրգեղենը, կանաչեղենը ուտելուց առաջ մաքուր լվանալ:

Ասկարիդ (վիշապակ): Այս ճիճուն շատ տարածված է մարդկանց մեջ. ապրում է բարակ աղիքների մեջ, վորտեղից յերբեմն կարող է անցնել լեղիի պարկի մեջ և կամ մտնել մեր ստա-

մոքսը և առաջ բերել խիստ փսխումն, վորի ժամանակ ճիճուն կարող ե ընկնել շնչափողի մեջ և մահվան պատճառ լինել։ Ասկարիդը շատ թունավոր ե. նրա թույնը գանվում ե մարմնի մեջ. քանի կենդանի յե ասկարիդը՝ խիստ չի թունավորում յուր տիրոջը, բայց յերբ սատկում ե մարդու աղիքի մեջ (թեկուզ ճիճվի դեղի աղ-դեցությունից) և շուտով դուրս չի քշվում, այն ժամանակ նրա մարմինը քայքայվում ե, թույնն ազատվելով ընկնում ե մարդու արյան մեջ և թունավորում. թունավորումն յերբեմն այնքան խիստ ե լինում, վոր մինչեւ իսկ մահվան պատճառ կարող ե լինել.

Ասկարիդի յեգը մինչեւ 60 միլիոն ձվիկներ ե դնում. այս ձվիկները պետք ե հասունանան մարդու մարմնից դուրս, վորանեղ ձվիկի մեջ դոյանում ե փամփշտաձեւ ճիճու (թրթուր) և միայն վերջիններս ընկնելով առողջ մարդու մարմնի մեջ առաջ կրերեն վարակումն:

Հետաքրքրական ե և այս, վոր փամփշտաձեւ ճիճուն միայն այն գեպքում կատարելապես կր-զարգանա, յեթե վորոշ ժամանակ մնա մարդու արյան մեջ, այս նպատակով փամփշտաձեւ ճի-ճուն ծակում ե մարդու աղիքի լորձաթաղանթը, ընկնում ե արյան մեջ, անցնում թոքերը, այս-տեղ կրկին ծակում թոքերի հյուսվածքը և անց-նում շնչափողը, վորանեղից ել վորկորի միջոցով գնում ե ստամոքսը և ասպա ընկնում աղիքները, վորտեղ և փոխվում ե իսկական կլոր ճիճվի։ Այդ-պիսով ուրեմն ասկարիդի թրթուրը յերկու ան-դամ ծակում ե իր տիրոջ մարմինը՝ առաջին անգամ աղիքից մտնում ե արյունը, իսկ յերկ-

բորդ անդամ արյունից անցնում ե թոքերը։ Այս  
բանը գիտնականներին հայտնի յե յեղած միայն  
վերջին ժամանակներս։

Առկարիդները միջնորդ տերեր չունեն։ Վոր-  
պեսզի ասկարիդի թրթուրը մեր մարմնի մեջ  
չընկնին, չալեաք ե ուտել անլվա կանաչեղեն,  
ընդեղեններ, մրգեղեն և այլն։

Տրիխինա։ Յերկու տեսակի տրիխինաներ  
կան՝ մկանների և աղիքների։ մկաններինը շատ  
մանր են, հազիվ նկատելի։ իսկ աղիքներինը քիչ  
մեծ։ սրանք ձվաներ չեն զնում, այլ ծնում են  
կենդանի սաղմեր։ սաղմերը տարածվում են ար-  
յան միջոցով ամբողջ մարմնի մեջ։ Մարդս կա-  
րող ե վարակվել տրիխինայով կիսայեփ խոզի  
միս ուտելուց։

Տրիխինաներն մեծ քանակությամբ ընկնելով  
մարդու մկանների մեջ, առաջ են բերում ցավ,  
յերբեմն մեծ տաքություն, գլխի ցավ և այլն,  
վորով վարակվածը հիշեցնում ե վորովայնային  
տիֆով հիվանդի։

Տրիխոցեթալուս—մտրակածե ճիճու (խլիստօ-  
վիկ)։ Մոտավորապես 4—5 սանտ. մեծություն  
ունի. գլխի մասը շատ բարակ ե, մազի նման,  
վորի շնորհիվ ել նա ամուր կպչում ե (խրվում  
ե) մարդու աղիքի լորձաթաղանթին։ Այս ճիճու-  
ներով կարելի յե վարակվել ջրի, կանաչեղենի,  
ընդեղենների միջոցով, ուր նա ընկնում ե փո-  
շուց և մարդու աղտոտություններից։

Անկիլոստոմա։ Մեծությունը 1—2 սանտի-  
մետը ե. առջևի մասում ունի ծծող գործարան,  
վորով և խրվում ե աղիքի մեջ և առատությամբ



### ԱՆԻԼՈՍՏՈՒՄ

արյուն ծծում։ Անկիլոստուման տռաջ և բերում  
խիստ սակավարյունություն և թունավորում և  
մարդկանց։

**ԾԾՈՂ ՃԻՃՈՒՆԵՐԻ**։ Սրանք պատկանում են  
տափակ ճիճուններին, և ինչպես անունը ցույց է  
տալիս, ունեն ծծիչներ, վորոնցով և ծծում են  
մարդու արյունը։

### ՃԻՃՈՒՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄՆ

Ազգաբնակությանը ճիճուններից ազատելու  
խնդրում, ինչպես այդ շեշտում և նույնպես  
պրոֆ։ Սկրյագինը, պետք և հոգան վոչ թե մի-  
այն առանձին անհատները, այլ և պետությունը։


**ԶԵ** վոր ճիճունների հիվանդությունը մեր  
իրականության մեջ կրում և սոցիալական ախտի  
բնույթ։ ճիճունները վոչ միայն առանձին անհա-  
տին են քայլքայում այլ և ամբողջ հասարակու-  
թյանը, պետությանը։

Ճիճուններից ազատվելու խնդրում, սխալ են  
այն մարդիկ, վորոնք չնկատելով իրենց մեջ ճիճ-

վի նշաններ, համոզված են, թե ճիճու չունեն  
և հետևասկես չեն դիմում բժշկության. պետք ե  
ի նկատի առնել, վոր այդ ձրիակերները տա-  
րիներով կարող են ծծել մեր արյունը, և մեզ  
համար աննկատելի կերպով քայլայել մեր առող-  
ջությունը Յես գեռ ևս շատ տարիներ առաջ  
խորհուրդ եմ տվել և այժմ ել պնդում եմ, վոր  
զօնե տարեկան մի անգամ պետք ե արտաթորու-  
թյունը (կղկղանք—կալ) քննության տալ, ճիճու-  
ների ներկայությունը վորոշելու համար:

Ինչ վերաբեր-  
վում ե այն հարցին,  
թե ինչպես բրժ-  
կվենք ճիճուներից,  
վոր հետևանքը դրա-  
կան լինի, պետք ե  
ի նկատի ունենալ  
վորոշ մանրամաս-  
նություններ. այս-  
ինչ մեզանում ճի-  
ճվի գեղորայքը սո-  
վորաբար ընդունում  
են շատ շաբլոն կեր-  
պով, վորի պատճա-  
ռով ել ճիճուն մնում  
և աղիքների մեջ  
նստած:

Ի նկատի առնելով այն հանքամանքը, վոր  
ճիճուներն աղիքի մեջ ծածկված են լինում կե-  
րակրի մասսայով, վորը թույլ չի տալիս դեղին  
կաչերու ճիճվին, դրա համար պետք ե հեռաց-  
նենք ճիճուների այդ պատճեց՝ աղիքների բո-



Տափակ ճիճվի գլուխը

վանդակությունը։ Այս նպատակով նախքան ճիճ-  
վի գեղն ընդունելը մի յերկու որ պետք ե նշա-  
նակել թեթև, հեշտամարս կերակուր, խակ գեղն  
ընդունելու նախորյակին պետք ե խմել լուծո-  
ղական։

Քանի փոք բոլոր ճիճվի գեղերը թունավորող  
են, ուրեմն և գեղը պետք ե նշանակի բժիշկը,  
նախորոք լաբարատորյական քննության միջոցով,  
ընորոշելով ճիճվի տեսակը։ Առանձնապես զգոյշ  
պետք ե լինել գեղի քանակի նկատմամբ։ Հղի  
կանանց սովորաբար չի թույլատրվում ճիճվի  
գեղ ընդունել։

Ճիճու հեռացնող գեղերից մի քանիսը սպա-  
նում, խակ մյուսները ժամանակավորապես մի-  
այն թմբեցնում են ճիճուներին։ ինչպես մեկ,  
նույնպես և մյուս գեպքում պետք ե ըստ հնա-  
րավորության շուտ հեռացնել ճիճուներին աղիք-  
ներից, վորովինեաև յեթե նրանք աղիքներում յեր-  
կար ժամանակ մնան, թմբածները կրկին կըկաղ-  
դուրվեն՝ ուշքի կրգան, խակ սպանվածները քայ-  
քայվելով կրթունավորեն մարդուն, ինչպես այդ  
մենք տեսանք ասկարիդի նկատմամբ։ Ահա թե  
ինչու անհրաժեշտ ե ճիճվի դեղն ընդունելուց  
2—3 ժամ հետո անպատճառ լուծողական խմել։  
Լուծողականը և այն լավ կողմն ունի, վոր շու-  
տով մարմնից քշում ե աղիքների մեջ մնացած  
ճիճվի գեղի ավելորդ մասը։

Հիմնվելով գիտական հետազոտությունների  
վրա, վորոնք հաստատում են աղքաբնակության  
համարյա գլխովին վարակումն ճիճուներով, ան-  
հրաժեշտ ե մանրամասն կերպով բացադրել հա-

սարակության լայն խավերին նախազգուշության  
միջնորդները:

Մինչև վերջին ժամանակներս մի քանի տես-  
սակ ճիճունների դուրս քշելը համարվում եր ան-  
հնարին. այժմ քանի վոր ինչպես արտասահմա-  
նում նույնպես և Ս. Ս. Խ. չ. այդ ուղղությամբ  
կատարված դիտական հետազոտությունները հապ-  
տատած են, վոր բոլոր տեսակի ճիճուններին կա-  
րելի յե հեռացնել, ուստի և կրկնում եմ, վոր  
չպետք ե սպասել ճիճունների սովորական ախ-  
տանիշների յերեան զալուն (զլիսի պտտոց, սրտի  
խառնումն, քթի քոր գալը, բերանից թքի հոսալը,  
ատամնների կրծտելը...) այլ պետք ե տարեկան  
գոնե մի անգամ արտաթորությունը քննության  
տալ, վորոշելու ճիճունների ներկայությունը ու  
տեսակը, և այնուհետև դիմել մասնագետ բժշկի  
խորհրդին համապատասխան դեղ ընդունելու  
համար:

Դպրոցական յերեխաններին ճիճուններից ազա-  
տելու խնդրում ակտիվ մասնակցություն պետք  
ե ցույց տա դպրոցը, դպրոցական բժշկի զլիսա-  
վորությամբ, լայն կերպով զրույցներ ունենալով  
ինչպես յերեխայոց հետ, նույնպես և նրանց  
ծնողների. իսկ ամբուղատորյանները պետք ե հոգ  
տանեն ապահովելու յերեխաններին ճիճվի դեղով:

A 1/2533



ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ ՅԵՎ ՎԱԶԱՌՎՈՒՄ Ե  
ԲԺ. Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱՆ

# ՄՐՏԻ ՀԻՎԱՆԴԻԹՑՈՒՆ

ՅԵՎ ԱՐՏԵՐԻՌՈՍԿԼԵՐՈԶ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ


Թուսերեն լեզվով

Հետեւյալ բովանդակությամբ

Սիրտը, արյունատար անոթները և սրանց գործունեությունը. Արյուն և արյան ճնշումն. Սրտի հիվանդությունները. — Պերիկարդիտ, Ենդոկարդիտ, Միոկարդիտ. ՄՐՏԻ ԱՐԱՏՆԵՐ (porок сердца). սրտի լայնացումն, սրտի թուլություն. ջղային սիրտ. առթափի լայնացումն (աներիզմա). Արտերիոսկլերոզ. Այս հիվանդությունների նախազգութագումն. Զրարաժություն. Բժշկությունը և թե ի՞նչպես պետք և ապրի սրտի հիվանդություն ունեցողը. անունդ և դիետա. Ալքոհոլային խմիչքների, ծխախոտի, ֆիզկուլտուրայի և սպորտի աղդեցությունը սրտի վրա:

ԳԻՆՆ 60 Կ.

Ծախսվում ե գրախանութներում. կարելի յե դիմել և հեղինակին. Թիֆլիս — Վոզնեսենսկայա փող. № 8 բնակարան ԲԺ. Վ. Խաչատրյանի.



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0037277

A

2533

## Բ.Փ. Վ. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՁԵԿ

ՕՐԻԿԱԿ

1. Triphenylmonomethylarsoniumjodid und seine pharmak. Wirkung. (սպառ.) . . . . .
2. Սիֆ. և Հաթա-Երկխյան «606»-ը (սպառ.) . . . . . 15 կ.
3. Сохранение здоровья (распр.) . . . . .
4. Волосы . . . . . 10 կ.
5. Բաղմածնություն, արվեստ. ամլություն և հակարեղմնավորական միջ. Բ. ապագր. . . . . 25 կ.
6. Անզրադարձ տիփ (սպառ.) . . . . . 20 կ.
7. Բժագոր և փորովայնային տիփ (սպառ.) . . . . . 30 կ.
8. Малокровие и его лечение . . . . . 25 կ.
9. Гигиена женщины выпуск I (սպառ.) . . . . . 20 կ.
10. Легоч. заболев. 1 книжка . . . . . 25 կ.
11. Ի՞նչ և վարակիչ հիվանդությունը (սպառ.) . . . . . 15 կ.
12. Վեներական ախտեր . . . . . 20 կ.
13. Առաջապահական դասընթաց (սպառովաճ)
14. Медицинск. терминология. . . . . 50 կ.
15. Половые отклонения и пол. воспитание. . . . . 30 կ.
16. Համաճար. ինֆլուենցիա (սպառ.):
17. Աղիքների ճիճուները և որանցից աղասավելու միջոցները . . . . . 20 կ.
18. Гигиена ученика . . . . . 25 կ.
19. Болезни сердца . . . . . 60 կ.
20. Թոթօֆոս Ֆօցօյնօ
21. Աշակերտի առողջապահությունը . . . . . 20 կ.
22. Աղիքների ճիճուները . . . . . 10 կ.

Պահեստը հեղինակի մոտ՝

Տիֆլիս, Вознесенская ул. № 8. Կա. д-ра Խաչատրյան.